

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԴԱՇՏԻ  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА  
АРМЕНИЯ  
ДАШТСКИЙ СЕЛЬСКИЙ  
МУНИЦИПАЛИТЕТ  
АРМАВИРСКОГО МАРЗА

Հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Դաշտ, Մ.Մաշտոցի 34  
Էլ. Փոստ՝ [dasht.armavir@mta.gov.am](mailto:dasht.armavir@mta.gov.am),  
Հեռախոս՝ +37494404402, +37495404402

Թիվ 04

<< 22 >> 01 2015թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ,  
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի  
ղեկավարի 2014թվականի տարեկան հաշվետվությունը և քաղվածք Դաշտ  
գյուղական համայնքի բնակիչների ընդհանուր ժողովից կայացած՝

22.01.2015թ.:

Առդիր <sup>10</sup> քերք:

Դաշտ գյուղական համայնքի ղեկավար՝



Հ. Պետրոսյան

## ՔԱՂՎԱԾՔ

2015թ. հունվարի 22-ին կայացած Դաշտի գյուղական համայնքի  
բնակիչների ընդհանուր ժողովի արձանագրությունից

22.01.2015թ. Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի մշակույթի  
տանը տեղի ունեցավ Դաշտ համայնքի բնակիչների ընդհանուր ժողովը:  
Ժողովին ներկա էին՝ համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի  
աշխատակազմի աշխատակիցները, դարոցի տնօրենը, Դաշտի գյուղական  
համայնքի բուժքույրը, փոստի վարիչը, մանկավարժներ և համայնքի  
բնակիչներ՝ թվով՝ 85մարդ:

Հաշվետվությանը ներկա էր նաև Արմավիրի մարզպետարանի աշխատա-  
կազմի տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության  
հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանը:

Օրակարգում

1. Դաշտ համայնքի ղեկավար՝ Գ.Պետրոսյանի  
2014թվականի ընթացքում կատարած  
աշխատանքների հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Ձեկուցող՝

Դաշտ համայնքի ղեկավար՝ Գ.Պետրոսյան:



Ներկայացված 2014թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունից հետո կայացավ քննարկում:

Բոլոր ներկա գտնվողները բավարար գնահատեցին համայնքի ղեկավարի կատարած աշխատանքները 2014 թվականի ընթացքում:

Ավագանու անդամ՝ Ա.Աբրահամյանը ողջունեց համայնքի ղեկավարի նախաձեռնությունը կապված համայնքը 100%-ով զագաֆիկացնելու աշխատանքների հետ:

Համայնքի բնակիչ՝ Ա.Նավասարդյանը նշեց,որ չնայած 2012թ. մասնակի վերանորոգվեց մշակույթի տունը,սակայն այժմ լիարժեք չի գործում և հիմնովին վերանորոգման խիստ կարիք է զգացվում:

Վ.Ղարիբյանը բարձրացրեց այն հարցը,որ հողատարածքների մշակությունը ,դժվարանում է,քանի որ ասֆալտապատ ճանապարհով թրթուրավոր տեխնիկայով երթևեկը արգելվում է,իսկ համայնքը չունի անհիվավոր գյուղ-տեխնիկա:

*խիստ անհրաժեշտություն կա նոր գյուղ-տեխնիկայի:*

Ա.Մեսրոպյանը անհրաժեշտ հարցերից համարեց նաև՝ համայնքի տարածքում ոռոգման ջրի կիսախողովակների 2կմ. անցկացումը:

Բարձրացված հարցերին պատասխանեց համայնքի ղեկավար՝

Յ.Պետրոսյանը:



Խոստացավ համայնքի բնակիչների և վերադաս մարմինների աջակցությամբ լուծել համայնքի առավել կարևոր հիմնախնդիրները:

Մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գոռ Հովհաննիսյանը նշեց, որ բավարար է գնահատում գյուղապետարանի գործունեությունը:

Նա նշեց նաև, որ ժողովում բարձրացված հարցերը մարզպետարանում կքննարկվեն և կտրվի համապատասխան ընթացք:

Դաշտ գյուղական համայնքի ղեկավար՝

Աշխատակազմի քարտիզողար՝



Գրանդ Պետրոսյան

Հարություն Մուրադյան

Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի առավել  
կարևոր հիմնախնդիրները.

22.01.2015թ.

- 1.Նոր գյուղ-տեխնիկա ունենալու անհրաժեշտություն:
- 2.Սշակույթի տան շենքի վերանորոգում:
- 3.Համայնքի տարածքում ոռոգման ջրի կիսախողովակների  
շկմ. անցկացում:

Դաշտ գյուղական համայնքի ղեկավար՝  
Աշխատակազմի քննիչուղար՝



Հրանդ Պետրոսյան

Հարություն Մուրադյան



## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱԿԱՐԻ

22.01.2015թ.

Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունն առավել թափանցիկ և հրապարակային դարձնելու և տեղական ժողովրդավարությունն ամրապնդելու նպատակով, 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնում են հաշվետվություն Դաշտ գյուղական համայնքի բնակչությանը:

Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքն ունի մոտ 1014 բնակիչ՝ այդ թվում նաև ժամանակավոր բնակվող անձինք, որոնցից հիմնական մասը գրավում է գյուղատնտեսական աշխատանքներով, իսկ ոչ գյուղատնտեսական աշխատանքով՝ բնակչության մոտ 10%:

Հաշվետու տարում ծնվել է 17 երեխա:

Համայնքը զազաֆիկացված է մոտ 90%-ով, իսկ մնացած 10%-ի համար այժմ կազմվում է նախագիծ առաջիկայում ամբողջովին զազաֆիկացնելու համար: Ոռոգման ջրի մատակարարման հետ կապված կան որոշակի դժվարություններ: Խմելու ջրի ջրամատակարարումը շուրջօրյա է:



2014թ. ընթացքում .

- կայացել է ավագանու հերթական և արտահերթ թվով 10 նիստ և ընդունվել է ավագանու թվով 39 որոշում,
- ընդունվել է համայնքի ղեկավարի թվով 14 որոշում,
- արձակվել է համայնքի ղեկավարի թվով 19 կարգադրություն,
- համայնքի ազգաբնակչությանն է տրամադրվել թվով 437 հատ տարբեր բովանդակությամբ տեղեկանքներ,
- Մուտք է եղել թվով 193 պաշտոնական գրություն, որոնք քննարկվել են և որոնց ընթացք է տրվել,
- Ելք է եղել թվով 147 պաշտոնական գրություն,
- Մուտք է եղել թվով 75 դիմում,
- Ամսեկան և տարեկան հաշվետվությունները ժամանակին է ներկայացվել ' ' մարզպետարան, սոցիալական ծառայություն և վիճակագրական վարչություն:
- Կազմակերպել է անասնազխաքանակի հաշվառում և ներկայացվել է վիճակագրական ' ' վարչություն, ժամանակին կազմակերպվել է հակահանճարակային պատվաստումներ:



## 2014թ-ի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները

---

Գյուղապետարանը առանձնակի ուշադրություն է դարձրել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Չամայնքի 61 ընտանիքների տրամադրվել է 1 775.0 հդ. սոց.օգնություն:  
Ընդհանուր առմամբ համայնքի անապահով ընտանիքներին ցուցաբերվել է օգնություն, ինչես նաև չի անտեսվել համայնքում սգո արարողությունները:  
Մարտի 8-ի կապակցությամբ համայնքի միջնակարգ դպրոցում կազմակերպվել է միջոցառում՝ հյուրասիրությունով:

Ծաղկեփնջերի և ծաղկեպսակների համար տրամադրվել է 120 000 դրամ գումար:

Դպրոցում վերջին զանգի միջոցառման համար տրամադրվել է 100 000 դրամ գումար:

Մայիսի 1-ին նշվել է աշխատավորների միջազգային օրը:

Չամայնքի ղեկավարի և ավագանու ուշադրության կենտրոնում է գտնվում Արցախյան ազատամարտիկները, իսկ հարթանակի օրվա կապակցությամբ համայնքում կազմակերպվել է միջոցառում, հյուրասիրություն և բացօթյա համերգ:

Չամայնքում յուրաքանչյուր անսվա շաբաթ օրը իրականացվում է աղբահանություն:



Համայնքում մշակույթային միջոցառումներ կազմակերպելու համար ձեռք է բերվել երաժշտական գործիք,որի համար տրամադրվել է 200 000դրամ:  
Կառուցվել է մանկական խաղահրապարակ,որի համար ձեռք է բերվել համապատասխան գույք և կահավորանք,որի համար տրամադրվել է 665 700դրամ գումար:

Համայնքին մշակույթի տան հին դռները և պատուհանները փոխարինվել են նորով,որի համար, համայնքի բյուջեից ծախսվել է 894 600դրամ գումար:

Համայնքում կառուցվում է Հայրենական լեճ պատերազմի մասնակիցների և զոհվածների հիշատակին նվիրված հուշակոթող,որի համար տրամադրվել է 1 000 000դրամ գումար:

Համայնքի գյուղատնտեսական աշխատանքները դյուրինացնելու համար ձեռք է բերվել խոտհնձիչ,որի համար տրամադրվել է 1 230 000դրամ գումար:

Համայնքի գյուղապետարանի աշխատանքները անխափան և կանոնավոր կատարելու համար ձեռք է բերվել համակարգիչներ,որի համար տրամադրվել է 500 000դրամ գումար:

Համայնքի կենտրոնական հրապարակը,որտեղ կան նորատունկ ծառեր և տեղադրված է խաչքարը, պարբերալսար ոռոգվում և խնամվում են գյուղապետարանի աշխատողների կողմից:

Խաչքարի տարածքում անցկացվել է գիշերային լուսավորություն:

Կատարվել է գիշերային լուսավորության ցանցի վերանորոգում և ընդլայնում, որի համար տրամադրվել է 250 000դրամ գումար:

Համայնքի զբոսայգու սալիկապատման աշխատանքները ընթացքի մեջ են: